

[ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ ]

Մ. Վարդազարյան

# ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Աշխարհաքաղաքականություն**

**ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ**

Երևան

ԵՊՀ հրատարակչություն

2015

*Հասարակական ԵՊՀ միջազգային հարաբերությունների  
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից  
(2015 թ. մայիսի 13-ի թիվ 144 արձանագրությունից)*

Կազմեց՝ պ. գ. թ., դոցենտ  
**Վարդագարյան Մ. Ե.**

*Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ միջազգային  
հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը և  
միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնը*

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

Ա 653

**Ծրագրի հեղինակ՝** պ. գ. թ., դոցենտ Վարդագարյան Մ. Ե.

Ա 653 Աշխարհաքաղաքականություն (Դասընթացի ծրագիր) /Կազմող  
Վարդագարյան Մ. Ե.: -Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 40 էջ:

«Աշխարհաքաղաքականություն» (գեոպոլիտիկա) դասընթացի ծրագիրը մշակվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնամանրոգական խորհրդի և միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնների ներկայացրած կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2010-6

© ԵՊՀ հրատ., 2015

© Վարդագարյան Մ. Ե., 2015

## **ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*1201/B13 «Աշխարհաքաղաքականություն» (2 կրեդիտ)*

*Դասախոսություն 32 ժամ, սեմինար 16 ժամ*

«Աշխարհաքաղաքականություն» դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ուսումնամեթոդական խորհրդի և միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության ամբիոնների կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

Ժամանակակից աշխարհաքաղաքականությունը գիտություն է միջազգային թատերաբեմում աշխարհի ուժային կենտրոնների, խոշոր պետությունների և միջազգային այլ դերակատարների միջև համագործակցության, մրցակցության ու փոխազդեցության մասին: Աշխարհաքաղաքականությունը գիտություն է համաաշխարհային գլոբալ գործընթացների և ռեսուրսային հոսքերի կառավարման մասին և քաղաքական պրակտիկայի առումով տեսական կարևոր բազա է:

Վերջին տասնամյակների ընթացքում «աշխարհաքաղաքականություն» հասկացությունը լայն տարածում է ստացել նաև հետխորհրդային հանրապետություններում: Աշխարհաքաղաքականության նկատմամբ հետաքրքրության աճը բացատրվում է ոչ միայն երկբևեռ աշխարհակարգի փլուզմամբ, «գաղափարական դարաշրջանի» փոփոխմամբ, այլև այն արմատական, երբեմն մուլտիսկ դրամատիկ, գործընթացներով, որոնց ականատես ենք Արևելյան Եվրոպայում, նախկին ԽՍՀՄ հանրապետություններում և Մերձավոր Արևելքում:

«Աշխարհաքաղաքականություն» դասընթացը ներառում է միջազգային հարաբերությունների տեսական ու գործնական խնդիրները, միջազգային կյանքի հիմնական գործընթացներն ու օրինաչափությունները: Դասընթացի շրջանակներում լուսարանվում են աշխարհաքաղաքականության հիմնական օրենքները, գործառույթներն ու հասկացությունները: Դասընթացի բաղկացուցիչ մասերն են՝ դասական աշխարհաքաղաքականության հիմնական սկզբունքներն ու գաղափարները, ժամանակակից աշխարհաքաղաքականության հիմնական դպրոցներն ու ուղղությունները, նոր աշխարհակարգի ձևավորման առանձնահատկու-

թյուններն ու գլոբալ և տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության հարակից շրջաններում ԱՄՆ-ի, ԵՄ, ՌԴ, ՉԺՀ-ի, ԻԻՀ և Թուրքիայի վարած քաղաքականությանը, փորձ է արվում իմաստավորել Հարավային Կովկասի հանրապետությունների արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:

«Աշխարհաքաղաքականություն» կրթական ծրագրով դասընթացի ուսուցումը նախատեսվում է իրականացնել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի և միջազգային բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների համար:

Դասընթացի ավարտից հետո ուսանողները պատկերացում կունենան աշխարհաքաղաքականության զարգացման փուլերի մասին, կտիրապետեն աշխարհաքաղաքական հիմնական հասկացություններին ու տերմիններին: Դասընթացի մասնակիցները նաև կծանոթանան աշխարհաքաղաքականության հիմնական դպրոցների առավել հայտնի տեսաբանների հայացքներին, նրանց կողմից քաղաքական իրողությունների վերլուծություններին:

# **ԲԱԺԻՆ 1.**

## **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ**

### **1.1. Գասընթացի նպատակը**

Գասընթացը բացահայտում է աշխարհաքաղաքականության՝ որպես գիտակարգի հիմնական գաղափարները, հայեցակարգերը և զարգացման փուլերը: Գասընթացում քննարկվում են աշխարհաքաղաքականության փոխհարաբերակցությունը հումանիտար այլ գիտությունների հետ, համաշխարհային աշխարհաքաղաքական տարածության ձևավորումը և աշխարհաքաղաքականության հիմնական հարացույցները:

Գասընթացի նպատակը «աշխարհաքաղաքականության»՝ որպես ժամանակակից գիտության վիճակի լուսաբանումն է, ուսանողներին այդ գիտակարգի զարգացման հիմնական ուղղություններին ծանոթացնելը: Թիրախային խնդիրներն են՝

1. Ուսանող միջազգայնագետին կամ քաղաքագետին ծանոթացնել աշխարհաքաղաքականության հիմնական հասկացություններին, տեսական մոտեցումներին ու հիմնախնդիրներին:
2. Ուսանողներին ներկայացնել աշխարհաքաղաքականության հիմնական մեթոդներն ու գործառույթները, հասկացությունների առանձնահատկությունները և ընդհանուր համակարգը:
3. Ուսանողներին ուսուցանել երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքը, տարածության վերահսկողության մոդելների ձևավորումը, սպառնալիքների ու մարտահրավերների դինամիկան:
4. Ուսանողների շրջանում ձևավորել ստեղծագործական մտածողություն և աշխարհաքաղաքական իրողությունները վերլուծելու հմտություններ, արդի աշխարհաքաղաքականության հիմնական միտումների և հեռանկարների կառուցողական ըմբռնում:
5. Ուսանողներին վարժեցնել տարբերակելու աշխարհաքաղաքականության վերաբերյալ գիտելիքի տեսական և կիրառական բաղադրամասերը, պետության արտաքին քաղաքականությունը ընկալել որպես աշխարհաքաղաքական ռազմավարության կարևոր գործիք:

## **1.2. Դասընթացի խնդիրները**

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներին իրազեկության բարձրացման տեսանկյունից առաջարկվում են հետևյալ խնդիրները.

- աշխարհաքաղաքականությունը դիտարկել որպես հասարակագիտության առանձնահատուկ ոլորտ, որը մի կողմից հետազոտում է պետության տարածական, իսկ մյուս կողմից՝ նրա քաղաքական շահերի միջև ձևավորված կապերն ու առանձնահատկությունները,
- ուսանողների շրջանում ձևավորել վերլուծական ունակություններ՝ աշխարհաքաղաքականությունը որպես մեթոդ աշխարհում ընթացող միջազգային և քաղաքական գործընթացները վերլուծելու համար, որոշակի պատկերացումներ «դասական» և նոր աշխարհաքաղաքական դերակատարների վերաբերյալ,
- ուսանողների շրջանում զարգացնել և ամրապնդել աշխարհաքաղաքական գործընթացներն ինքնուրույն վերլուծելու հմտություն,
- սերմանել աշխարհաքաղաքականությունը որպես պետության արտաքին քաղաքականության գաղափարական դրդապատճառ դիտարկելու և այդ տեսանկյունից պետության արտաքին քաղաքականությունը հիմնավորելու կարողություններ,
- «աշխարհաքաղաքականություն» դասընթացի յուրացումը ուսանողության շրջանում կձևավորի և կամրապնդի ժողովրդավարական-քաղաքական մշակույթը, ինչպես նաև կնպաստի բազմակենտրոն աշխարհակարգ ձևավորող գործընթացներում դրանց մշակութային-քաղաքակրթական կողմնորոշումներին:

## **1.3. Դասընթացի տեղը սոցիո-հումանիտար կրթության համակարգում**

Բազմաթիվ ուսումնասիրողներ «աշխարհաքաղաքականությունը» դիտում են որպես մի գիտակարգ, որը ձևավորվել է փիլիսոփայության, պատմության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և այլ գիտություններ-

րի փոխներթափանցումների արդյունքում: Աշխարհաքաղաքականությունը օրգանապես կապված է հումանիտար գիտակարգերի, մասնավորապես՝ փիլիսոփայության և սոցիոլոգիայի հետ, որոնք տարածական գործոնի ուսումնասիրության ուղղությամբ էական ներդրում ունեն:

Պետությունների միջև գլոբալ փոխհարաբերությունների բնագավառով է զբաղվում նաև պատմագիտությունը (տարբեր պետությունների արտաքին քաղաքականության, միջազգային հարաբերությունների, դիվանագիտության պատմություն, առանձին կամ մի խումբ պետությունների միջև փոխհարաբերությունների պատմություն): Քաղաքագիտության տեսանկյունից աշխարհաքաղաքականությունը դիտարկվում է որպես գիտություն, որն ուսումնասիրում է պետության և տարածության փոխհարաբերությունները, բնական միջավայրի ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Այս հայեցակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս բացատրելու պետության կամ քաղաքական այլ դերակատարների վարքագծի այս կամ այն կողմերը՝ միաժամանակ ձևավորելով քաղաքական գիտելիքի՝ աշխարհաքաղաքականության հատուկ բնագավառ: Այսօր աշխարհաքաղաքական քարտեզում ավելի հաճախ առանձնացնում են երեք շերտ՝ քաղաքական (ազգային պետություններ), աշխարհագրական (երկրի լանդշաֆտ) և սոցիալական (հասարակության, քաղաքակրթությունների և մշակույթների առանձնահատկությունները):

Այսպիսով, աշխարհաքաղաքականությունը վերլուծում է համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների հետ փոխկապակցված հիմնախնդիրների ամբողջականությունը և հանդես է գալիս որպես միջգիտակարգային գիտություն, որն ուսումնասիրում է պետության քաղաքականության կախվածությունը աշխարհագրական, տնտեսական, քաղաքական գործոններից և հասարակության սոցիալական համակարգից:

Աշխարհաքաղաքականությունը, ի տարբերություն այլ հումանիտար գիտությունների, միջազգային հարաբերություններին անդրադառնում է ազգային շահերի տեսանկյունից, որից սովորաբար բխում է պետությունների արտաքին քաղաքական և ռազմական ռազմավարությունը,



ինչպես նաև հետազոտում և կանխատեսում է միջազգային գլոբալ ու լոկալ հակամարտությունները:

#### **1.4. Գասընթացի կրթական արդյունքները**

*Ա. ըստ վերլուծական իրազեկության՝ պայմանավորված տեղեկատվության և գիտելիքի կառավարմամբ*

- 1) Համացանցում համապատասխան տեղեկության արդյունավետ որոնումների ընդունակության ձևավորում:
- 2) Տեղեկությունը վերափոխելու կարողություն, այսինքն՝ այն վերլուծելու ունակությունների զարգացում:
- 3) Վերլուծական խնդիրների, հետազոտական հարցումների և հիմնական վարկածների ձևավորման կարողության զարգացում:
- 4) Էմպիրիկ տվյալների հավաքում (ինքնուրույն աշխատանք կատարելու համար):

*Բ. Ըստ հաղորդակցային իրազեկության*

- 1) Միասնական խնդիրների և հարցադրումների պատրաստման միջոցով համատեղ՝ թիմով աշխատելու ընդունակության զարգացում:
- 2) Բանավեճի համատեքստում պրոֆեսիոնալ հաղորդակցության հմտությունների զարգացում:
- 3) Վերլուծության արդյունքները բանավոր և գրավոր ներկայացնելու ընդունակություն:

#### **1.5. Կրթական մեթոդները (պարապմունքների անցկացման ձևերը)**

ա) Դասախոսություններ, այդ թվում՝ երկխոսության բաղադրամասերի ընդգրկմամբ:

բ) Մեմինար պարապմունքներ՝ փոխներգործող (ինտերակտիվ) բանավեճերի առաջադրմամբ:

գ) Ինքնուրույն աշխատանք՝ ընդգրկելով վերլուծական նյութերը:

դ) Արտալսարանային հատորդակցություն դասախոսի հետ՝ քննարկումների համատեղ պատրաստում:

### **1.6. Գասընթացի բովանդակության յուրացման խնդիրները**

I. Գասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

- Գիտելիք և իմացություն,
- Կծանոթանա աշխարհաքաղաքականության հիմնական օրենքներին, հասկացություններին, մեթոդներին և գործառույթներին, ինչպես նաև հիմնական տեսական մոտեցումներին և հիմնախնդիրներին:

II. Ունակ կլինի

(բուն մասնագիտական կարողություններ)

- Ներկայացնելու ժամանակակից աշխարհաքաղաքականության հիմնական գիտական ուղղությունները և հիմնահարցերը:
- Դրսևորելու ստեղծագործական մտածողություն և աշխարհաքաղաքական իրականությունը վերլուծելու հմտությունների կարողություն, տիպավորելու համաշխարհային համակարգերը:

(ընդհանրական կարողություններ)

- Ստացած գիտելիքները տեսական հիմք կծառայեն աշխարհաքաղաքական հարացույցը պատկերացնելու համար, որը որոշակի դիրքորոշում է ենթադրում համաշխարհային գործընթացների նկատմամբ:
- Կարող է առանձնացնել և տարբերակել աշխարհաքաղաքական գիտելիքի տեսական և կիրառական, արժեքային և գործիքակազմական բաղադրամասերը:

### **1.7. Գիտելիքի ստուգման ընթացիկ ձևերը**

1. Ինքնուրույն աշխատանքի արդյունքները՝ վերլուծական աշխատանքների տեսքով (միջանկյալ վերահսկում), լրացուցիչ աղբյուրների և գրականության օգտագործում:
2. Հայեցակարգերի, փաստարկումների քննարկումներ:
3. Դասընթացի թեմաների թեստավորում, սահմանային կամ ընդհանուր արդյունքների թեստավորումներ:
4. Ընթացիկ (միջանկյալ) գրավոր քննություններ:
5. Եզրավիակիչ քննություն (վերջնական արդյունքի վերահսկում):

**ԲԱԺԻՆ 2.**

**ԳԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**2.1. Գասընթացի կազմակերպական-մեթոդական տվյալները**

<b>Աշխատանքի տեսակը</b>	<b>Ժամաքանակը</b>
Ընդհանուր ժամաքանակը	
Լսարանային աշխատանք	
Դասախոսություններ	32
Սեմինարներ	16
Ինքնուրույն աշխատանք	60
Գիտելիքի ընթացիկ վերահսկման տեսակները (ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր քննություններ)	1 ժամ մեկ ուսանողի համար
Եզրափակիչ քննություն	

**2.2. Գասընթացի թեմատիկ պլանը**

<b>Թեմաների և բաժինների անվանումները</b>	<b>Ցերեկային ուսուցում</b>			
	<b>Ժամաքանակը</b>			
	<b>Դասախոս</b>	<b>Սեմինար պարապմունք</b>	<b>Ինքնուրույն աշխ.</b>	<b>Ժամերն ըստ թեմաների</b>
<b>Թեմա 1.</b> Ներածական մաս: Գասընթացի նպատակները և խնդիրները: Գասընթացի վերաբերյալ գրականության և տեղեկատվական ալլադբյուրների տեսություն:	2			2

<b>Թեմա 2.</b> Աշխարհաքաղաքականության աղբյուրները, օբյեկտը, հիմնական դարաշրջանները և օրենքները, կատեգորիաները, մեթոդներն ու գործառույթները:	2			
<b>Թեմա 3.</b> Դասական աշխարհաքաղաքականության հիմնական սկզբունքներն ու գաղափարները:	2	2		
<b>Թեմա 4.</b> 20-րդ դարի երկրորդ կեսի աշխարհաքաղաքականության անգլոսաքսոնական և արևմտյան հիմնական դպրոցներն ու ուղղությունները:	2	2		
<b>Թեմա 5.</b> Աշխարհաքաղաքականության ռուսական դպրոցը:	2			
<b>Թեմա 6.</b> ԱՄՆ-ը ժամանակակից գլոբալ աշխարհակարգում	2	2		
<b>Թեմա 7.</b> Եվրամիության աշխարհաքաղաքական հեռանկարները XXI դարում:	2	2		
<b>Թեմա 8.</b> Արևելյան և Հարավային Ասիայի երկրների աշխարհաքա-	2	2		

դաքական առաջնահերթությունները:				
<b>Թեմա 9.</b> Լատինական Ամերիկյան և Աֆրիկյան XXI դարի աշխարհաքաղաքական համակարգում:	2			
<b>Թեմա 10.</b> Հայաստանի Հանրապետության հարակից շրջանների աշխարհաքաղաքական հիմնահարցերը:	2	2		

### 2.3. Գասընթացի բովանդակությունը

**Թեմա 1. Ներածական մաս: Գասընթացի նպատակները և խնդիրները: Գասընթացի վերաբերյալ գրականության և տեղեկատվական այլ աղբյուրների տեսություն:**

Ներածական մաս: Գասընթացի նպատակը և խնդիրները, դրա կառուցվածքը: Գասընթացի տեղը քաղաքական կրթական համակարգում, կապն այլ գիտակարգերի հետ:

Աշխարհաքաղաքական կանխատեսումների կարևորությունը տարբեր պետությունների զարգացման հեռանկարների տեսանկյունից:

Հիմնարար և կիրառական աշխարհաքաղաքականություն: Տեսական և հայեցակարգային հիմնախնդիրները հիմնարար աշխարհաքաղաքականությունում: Հիմնարար աշխարհաքաղաքականության տեսանկյունից աշխարհաքաղաքական դիրքի, կենսական տարածության, ծովային հզորության, զսպման, ատլանտիզմի, եվրասիականության և այլ հայեցակարգերի ուսումնասիրության նշանակությունը:

Քաղաքական, տնտեսական և աշխարհագրական հիմնախնդիրները՝ որպես կիրառական աշխարհաքաղաքականության ուսումնասիրության բնագավառ: Տարբեր պետությունների ռազմաքաղաքական դա-

շինքների ձևավորումը և փլուզումը, գրքալացումը և ռեգիոնալացումը, միջազգային և ֆինանսական կազմակերպությունների դերի մեծացումը, տրանսպորտային ու էներգետիկ նախագծերի իրականացման աշխարհաքաղաքական հետևանքները՝ որպես կիրառական աշխարհաքաղաքականության հետազոտման օբյեկտ:

Ժամանակակից գործընթացներում քաղաքական, տնտեսական, էկոլոգիական և սոցիոմշակութային ասպեկտների միահյուսումը:

Դասընթացի նպատակը ուսանողների շրջանում վերլուծական, քնննադատական մտածողության ձևավորումն է, աշխարհագրական և տնտեսական դետերմինիզմի հաղթահարումը:

### **Սեմինար պարապմունքի հարցեր.**

1. Ի՞նչ է ուսումնասիրում աշխարհաքաղաքականությունը որպես գիտություն: Աշխարհաքաղաքականության ավանդական և ժամանակակից մեկնաբանությունները:
2. Աշխարհաքաղաքականության և այլ գիտակարգերի փոխհարաբերությունները:

### **Գրականություն**

1. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
2. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
3. **Желтов В. В., Желтов М. В.**, Геополитика: история и теория. М.: Вузовский учебник, 2012.
4. **Дугин А.**, Основы геополитики., М., 2000.

### **Լրացուցիչ գրականություն**

1. **Сирота Н. М.**, Основы геополитики: Учебное пособие. СПб., 2001.
2. **Колосов В. А., Мироненко Н. С.**, Геополитика и политическая география., М., 2002.
3. **Исаев Б. А.**, Геополитика.-СПб: Питер, 2006.
4. **Гаджиев К. С.**, Введение в геополитику, М., 2001.
5. **Тузиков А. Р.**, Основы геополитики: Учебное пособие. М., 2004.
6. **Василенко И. А.**, Геополитика: Учебник для вызов. М., 2003.

## **Թեմա 2. Աշխարհաքաղաքականության աղբյուրները, օբյեկտը, հիմնական դարաշրջանները և օրենքները, կատեգորիաները, մեթոդներն ու գործառույթները**

19-20-րդ դդ. սահմանագծին առաջացած աշխարհաքաղաքականությունը ձևավորվել է երեք գիտական աղբյուրների հենքի վրա՝ քաղաքակրթական, ռազմաստրատեգիական և աշխարհագրական դետերմինիզմ:

Քաղաքակրթական մոտեցման հիմնադիրը Ն. Դանիլևսկին է, որի կարծիքով՝ պատմական քատերաբեմում հիմնական դերակատարում ունեն ոչ թե պետությունները կամ առանձին ազգերը, այլ խոշոր մշակութային-կրոնական ընդհանրությունները, որոնց նա անվանում է «մշակութապատմական տիպեր», և որոնք հետագայում ստացան «քաղաքակրթություն» անվանումը: Նրա հայացքները հետագայում զարգացում ստացան Կ. Լեոնտևի, Օ. Շպենգլերի, Ա. Թոյնբիի, Ս. Հանթինգտոնի և այլոց աշխատություններում:

Աշխարհաքաղաքականության մյուս աղբյուրը ռազմաստրատեգիական տեսություն է, որի ներկայացուցիչներն են Ն. Մաքիավելլին, Կարլ ֆոն Կլաուզիպը, Հելմուտ Մոլտկեն, Ալֆրեդ Մեխենը: Ռազմաստրատեգիական մոտեցման տեսաբանների կողմից «առանցքային կետերի» ու «գոտիների» գաղափարի ներմուծումը:

Աշխարհաքաղաքականության երրորդ աղբյուրը աշխարհագրական դետերմինիզմն է: Դեռևս անտիկ շրջանի հեղինակները նկատել են, որ աշխարհագրական միջավայրը իր ազդեցությունն ունի տարբեր ժողովուրդների պատմության ընթացքի վրա: Աշխարհագրական դետերմինիզմի գործոնը առավել խոր վերլուծության է ենթարկվել Ֆ. Ռատցելի և Ռ. Չելլենի աշխատություններում:

Աշխարհաքաղաքականության օբյեկտ են մոլորակային տարածությունը և աշխարհաքաղաքական գործընթացները: Աշխարհաքաղաքականության առարկան աշխարհաքաղաքականության սուբյեկտների միջև փոխազդեցությունն է կամ մոլորակային տարածության վերահրսկողությունը: Եթե աշխարհաքաղաքականության օբյեկտը համեմատաբար անփոփոխ է մնում, ապա աշխարհաքաղաքականության առար-



կան փոփոխական է: Աշխարհաքաղաքականության տեսանկյունից մարդկության պատմությունը բաժանվում է՝ վեստֆալյան (1648), վիեննական (1814-1815), վերսալյան (1918), պոտսդամյան (1915), բելովեժյան (1991) դարաշրջանների, որոնց հիմքում ընկած են ուրույն ուժերի բալանսը, ազդեցության գոտիները և սահմանները:

Աշխարհաքաղաքականության հիմնական օրենքներն են՝ արմատական երկվության (դուալիզմի), մարդկության պատմությունում տարածական գործոնի մեծացման, ինչպես նաև ցամաքի և ծովի սինթեզի օրենքները:

Աշխարհաքաղաքականության հիմնական կատեգորիաներից է տարածության վերահսկողությունը (ռազմական, քաղաքական, տնտեսական, կոմունիկացիոն, ժողովրդագրական և այլն): Աշխարհաքաղաքականությունը կարևորում է նաև ուժերի հավասարակշռության, քաղաքական տարածության, շահի կատեգորիաները:

Աշխարհաքաղաքականությունը լայնորեն օգտագործում է այլ գիտական գիտակարգերի կողմից օգտագործվող մեթոդները (համակարգային, համեմատական, պատմական, նորմատիվ-արժեքային, գործառական, ինստիտուցիոնալ և այլն) ու գործառույթները (ճանաչողական, կանխատեսման, գաղափարական և այլն):

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- Աշխարհաքաղաքականության գործառույթները, մեթոդներն ու կատեգորիաները:
- Աշխարհաքաղաքականության զարգացման հիմնական փուլերը:
- Աշխարհաքաղաքականության հիմնական օրենքները:

### **Գրականություն**

1. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
2. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
3. **Сирота Н. М.**, Основы геополитики: Учебное пособие. СПб., 2001.
4. **Колосов В. А., Мироненко Н. С.**, Геополитика и политическая география., М., 2002.

5. **Желтов В. В., Желтов М. В.**, Геополитика: история и теория. М.: Вузовский учебник, 2012.

**Լրացուցիչ գրականություն**

1. **Гаджиев К. С.**, Введение в геополитику, М., 2001.
2. **Тузиков А. Р.**, Основы геополитики: Учебное пособие. М., 2004.
3. **Василенко И. А.**, Геополитика: Учебник для вызов. М., 2003.
4. **Дугин А.**, Основы геополитики., М., 2000.

### **Թեմա 3. Գասական աշխարհաքաղաքականության հիմնական սկզբունքներն ու գաղափարները**

Ֆ. Ռատցելի «Քաղաքական աշխարհագրությունը»: Ռ. Չելլենը՝ որպես «աշխարհաքաղաքականություն» կատեգորիայի հեղինակ: Ա. Մեխենի «Ծովային ուժի» տեսությունը: Հ. Մակլինդերի «Պատմության աշխարհագրական առանցքը»: Կ. Հաուսհոֆերը որպես «մայրցամաքային բլրկի» տեսության հիմնադիր: Ն. Սպայկմենի կայսերական գեոստրատեգիան, “rimland” հասկացության՝ Հ. Մակլինդերի հայացքների վերանայումը և «միջին օվկիանոսի» տեսությունը:

#### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- Երբ և ինչպիսի տեսական աշխատություններից սկսվեց աշխարհաքաղաքականության զարգացման դասական շրջանը:
- Աշխարհաքաղաքականության գերմանական դպրոցի բնութագրումը:
- Աշխարհաքաղաքականության բրիտանական և ամերիկյան դրպրոցների առանձնահատկությունը:

#### **Գրականություն**

1. Геополитика и геостратеги: Хрестоматия / Под. ред. Б. А. Исаева, СПб., 2003, часть 1. Предчеты геополитики.
2. Дугин А., Основы геополитики., М., 2000.
3. Колосов В. А., Мироненко Н. С., Геополитика и политическая география., М., 2002.
4. Мухаев Р. Т., Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
5. Нартов Н. А., Геополитика: Учебник для вузов. М., 2004.
6. Тихонравов Ю. В., Геополитика, Учебное пособие. М., 2000.
7. Исаев Б. А., Геополитика.-СПб: Питер, 2006.

#### **Լրացուցիչ գրականություն**

1. Поздняков Э. А., Геополитика, М., 1995.
2. Сирота Н. М., Основы геополитики: Учебное пособие. СПб., 2001.

3. **Хаусхофер К.**, О геополитике. М., 2001.
4. **Маккиндер Х. Дж.**, Географическая ось истории// Полис.-1995, N 4.
5. **Мэхен А. Т.**, Влияние морской силы на историю, 1660-1783, СПб., 2002.
6. **Gerry Kearns**, Geopolitics and Empire. The Legacy of Halford Makinder, 2000.
7. **Челлен Р.**, Государство как форма жизни, М., РОССПЭН, 2008.

**Թեմա 4. 20-րդ դարի երկրորդ կեսի աշխարհաքաղաքականության  
անգլոսաքսոնական և արևմտյան հիմնական դպրոցներն ու  
ուղղությունները**

Սառը պատերազմի սկզբնավորումը, երկբևեռ աշխարհակարգի ձևավորումը և համաշխարհային աշխարհաքաղաքականության նոր փուլի ձևավորումը: Անգլո-սաքսոնական աշխարհաքաղաքագետների փորձերը՝ վերանայելու դասական ցամաքային աշխարհաքաղաքականությանը բնորոշ աշխարհագրական դետերմինիզմը և «նարդու իրավունքների» կարևորումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային հանրապետությունների և մասնավորապես Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) հարաբերությունները: ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից համագործակցության նոր մոդելի ձևավորումը: Հետխորհրդային տարածքում արևմտյան ժողովրդավարության և ազատությունների տարածման փորձերը: Նախկին բևեռների միջև իրական գործընկերային փոխհարաբերությունների բացակայությունը և ԱՄՆ-ում գլոբալ վերահսկողության նոր հայեցակարգերի մշակումը:

Եվրոպական աշխարհաքաղաքականության «ցամաքային ուժի» տեսաբանների դերի նվազման օբյեկտիվ պատճառները 1950-ական թվականներին: 1960-ական թվականներին Եվրոպայում աշխարհաքաղաքական երկու ուղղությունների ձևավորումը: «Նոր աջերը» որպես եվրոպական ինքնուրույն աշխարհաքաղաքականության կողմնակից: Ա. դը Բենուայի «Դաշնային կայսրության», Ժ. Տիրիարի «Եվրոպան՝ Վլադիվոստոկից մինչև Դուբլին» նախագծերը և Կ. Տերրաչանոյի աշխարհաքաղաքական հայացքները: Այս շրջանում եվրոպական աշխարհաքաղաքագետների շրջանում տարածված մյուս ուղղությունը մոնդիալիստականն էր, որը ենթադրում էր ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի ռազմավարական միասնություն:

Ի. Գալթունգը և Ժ. Աթալին աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումների մասին: Կ. Մանտորոյի «գլոբալ քաոսի» տեսությունը:

Անգլո-ամերիկյան աշխարհաքաղաքական ժամանակակից դպրոցը: Ջ. Քենանի «Չսպանն քաղաքականությունը»: Ռու. Ռոստոմուն, Մ. Թեյլորը և Ռ. Մակնամարան և «դոմինոյի տեսությունը»: Կ. Գրեյի «դինամիկ

զապման» և Գ. Ալպերովիցի «միջուկային զապման» հայեցակարգերը: Ս. Քոենի աշխարհաքաղաքական հայացքները: Զ. Բժեզինսկու «կոնվերգենցիայի տեսությունը»: Ֆ. Ֆուկոյամայի «պատմության ավարտը» հայեցակարգը: Ս. Հանֆինգթոնի համաշխարհային քաղաքակրթությունների միջև խորացող հակամարտությունների մասին մոտեցումները:

### **Մեմինար պարապմունքի հարցեր**

- Ատլանտիզմ և մոնդեալիզմ:
- Եվրոպական աշխարհաքաղաքականությունը: «Նոր աջեր»:

### **Գրականություն**

1. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
2. **Тихонравов Ю. В.**, Геополитика, Учебное пособие. М., 2000.
3. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
4. **Дугин А.**, Основы геополитики., М., 2000.
5. **Дергачев В. А.**, Геополитика: Учебник для вузов, М., 2004.
6. **Исаев Б. А.**, Геополитика.-СПб:Питер, 2006.

### **Լրացուցիչ գրականություն**

1. **Василенко И. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2003.
2. **Тихонравов Ю. В.**, Геополитика, Учебное пособие. М., 2000.
3. **Киссинджер Г.**, Дипломатия. М., 1997.
4. **Киссинджер Г.**, Нужна ли Америке внешняя политика. М., 2002.
5. **Бжезинский З.**, Великая шахматная доска. М., 1998.
6. **Бжезинский З.**, Выбор: Глобальное господство или глобальное лидерство. М., 2004.
7. **Хантингтон С.**, Столкновение цивилизаций. М., 2003.
8. **Фукуяма Ф.**, Конец истории? //Вопросы философии, 1989, N 3.
9. **Фукуяма Ф.**, Великий разрыв. М., 2002.
10. Геополитика и геостратеги: Хрестоматия / Под. ред. Б. А. Исаева, 4. Ш. кн.7: Современная американская геополитика. СПб, 2004.
11. **Баттлер А.**, Контуры мира в первой половине XXI века и чуть далее // Мировая политика и международные отношения, 2002.

12. **Галлуа П.**, Стратеги в ядерный век. М., 1962.
13. **Ясперс К.**, Смысл и назначение истории. М., 1994 .
14. **Лиддел- Бард Б.**, Стратегия. М., 1957.
15. Геополитика и геостратеги: Хрестоматия / Под. ред. Б. А. Исаева, СПб, 2004, 4. Ш. кн. 2: Современные европейские геополитики, там же 4. Ш. Современные геополитики. кн. 6,7. Современные российские геополитики.

## **Թեմա 5. Աշխարհաքաղաքականության ռուսական դպրոցը**

Ռուսաստանի պատմության պարբերականացումը ըստ աշխարհաքաղաքականության: Արևմտականներ և սլավոնոֆիլներ: Լ. Մենշիկովի «Քաղաքակրթությունը և խոշոր գետերը» աշխատությունը: Ռուսական աշխարհաքաղաքականության քաղաքակրթական ակունքները: Ն. Դանիլսկու «Ռուսաստանը և Եվրոպան» աշխատությունը: Պ. Սավիցկու և Լ. Գումիլյովի աշխարհաքաղաքական հայացքները: Ժամանակակից ռուսական աշխարհաքաղաքականության տեսաբանների հիմնական մոտեցումները (նացիոնալ-բոլշևիզմ, «Ռուսաստանը՝ որպես կղզի», նեոեվրասիականներ և այլն):

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- Ռուսաստանի աշխարհաքաղաքական կողը
- Ն. Դանիլսկու մշակութապատմական տիպերի հայեցակարգը
- Կ. Լեոնտևի բյուզանդականության տեսությունը
- Եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգը
- Ռուսական ժամանակակից աշխարհաքաղաքականության հիմնական ուղղությունները:

### **Գրականություն**

1. **Исаев Б. А.**, Геополитика.-СПб:Питер, 2006.
2. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
3. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
4. **Гаджиев К. С.**, Геополитические горизонты России (контуры нового миропорядка) М., Изд-во, “Экономика”, 2007.
5. **Гаджиев К. С.**, «Большая игра» на Кавказе: Вчера, сегодня, завтра. М.: Международные отношения, 2012.
6. **Лузянин С. Г.**, Восточная политика Владимира Путина. Возвращение России на “Большой Восток” (2004-2008 гг.) М.: АСТ: Восток-Запад, 2007.



## Լրացուցիչ գրականություն

1. **Жильцов С. С., Воробьев В. П., Шутов А. Д.**, Эволюция политики России на постсоветском пространстве. М.: Восток-Запад, 2010.
2. **Василенко И. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2003.
3. **Дугин А.**, Основы геополитики., М., 2000.
4. **Дугин А. Г.**, Международные отношения. Парадигмы, теории, социология, М., Академический Проект, 2013.
5. **Жириновский В. В., Васецкий Н. А.**, Социология мировой политики, М., Академический проект: Альма Матер, 2012.
6. **Пушков А. К.**, Внешняя политика России и ее национальные интересы в XXI веке. М.: МГИМО-университет, 2011.
7. **Гаджиев К. С.**, Сравнительный анализ национальной идентичности США и России, М., Логос, 2013.
8. **Нарочницкая Н. А.**, Россия и русские в современном мире- М.: Эксмо: Алгоритм, 2011.
9. **Паршев А. П.**, Как России обогнать Америку (как Путину обустроить Россию), М., Алгоритм, 2013.
10. Россия и страны Востока в постбиполярный период. Под ред. Д. В. Стрепцова. М., Аспект Пресс, 2014.
11. **Путин:** Замковый камень российской государственности (“Коллекция Изборского клуба”), М.: Изборский клуб, Книжный мир, 2010.
12. **Վլադիմիր Պուտին**, Մարտահրավերներ, հիմնախնդիրներ, լուծումներ: Հոդվածների ժողովածու, Եր., Ռուսաստանի բուհերի շրջանափարտների միավորման հրատարակություն, 2012:
13. **Шамир Израель**, Асимметричный ответ Путина (Путинская Россия. Взгляд с Запада). М.: Алгоритм, 2014.
14. **Рар Александр**, Путин и Запад. От любви до ненависти (Путинская Россия, Взгляд с Запада) М.: Алгоритм, 2014.
15. **Киссинджер Генри**, Понять Путина-Политика здравого смысла (Путинская Россия, Взгляд с Запада), Москва: Алгоритм, 2014.

16. **Стент Анджела**, Почему Америка и Россия не слышат друг друга? Взгляд Вашингтона на новейшую историю российско-американских отношений. М.: Манн, Иванов и Фербф, 2015.
17. **Иноземцев В. Л.**, Что случилось с Россией (Проект “Путин”). М., Изд-то Алгоритм, 2014.
18. Россия и Европейский Союз в мировой политике. Материалы международных конференций /Под ред. М. Л. Энтима. М.: Гриф и К. 2011, 316 с.
19. Указ Президента РФ „О мерах по реализации внешнеполитического курса Российской Федерации от 7 мая 2012 г. N 605” – <http://graph.document.kremlin.ru/page.aspx?1:1610881>.
20. Указ Президента РФ от 17 декабря 1997 года N 1300 „Об утверждении Концепции национальной безопасности РФ” – <http://www.law.edu.ru/norm/D=100126847.100126848#text>.
21. Концепция внешней политики Российской Федерации. Утверждена Президентом РФ В. В. Путиным 12 февраля 2013 г. – [www.mid.ru/brp4nsf/newslne/6D84DDeDeDbf7D](http://www.mid.ru/brp4nsf/newslne/6D84DDeDeDbf7D).
22. Россия 2020. Главные задачи развития страны. М.: Изд-во „Европа”, 2008, 60 с.
23. **Павел Сипин**, Три пути России в Азии (Китай-Россия-АТР) - Россия в глобальной политике, N 5, 2012.
24. **Кирилл Черевко**, Россия на рубежах Японии, Китая и США (2-я половина XVII - начало XXI века). М., изд-во Института русской цивилизации, 2010, 688 с.
25. **Н. Н. Емельянова**, Россия и Евросоюз. Соперничество и партнерство. М., Международных отмошения, 2009.
26. **Эдуард Лозанский**, Россия между Америкой и Китаем. М., Международные отмошения, 2007, 288 с.
27. Военно-политическая ситуация в мире и вопросы обеспечения национальной безопасности России: сб. материалов/под. ред. д-ра экон. наук Г. Г. Тищенко, канд. инст. наук Е. С. Хотьковой, М.: РИСИ, 2011.

## **Թեմա 6. ԱՄՆ ժամանակակից գլոբալ աշխարհակարգում**

ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական և ներքաղաքական զարգացման արդի միտումները: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գաղափարական հիմքերը: ԱՄՆ-ը գլոբալ ռազմական հաշվեկշռում: ԱՄՆ-ԵՄ, ԱՄՆ-ՉԺՀ, ԱՄՆ-ՌԴ փոխհարաբերությունների զարգացման դինամիկան: Միացյալ Նահանգների ժամանակակից ռազմավարությունը Լատինական Ամերիկայում և Հարավարևելյան Ասիայում: Բազմաբևեռ աշխարհում ԱՄՆ-ի ազդեցության նվազումը և արտաքին քաղաքականության հարձակողական ռազմավարության ակտիվացումը: Արտաքին քաղաքական խնդիրների հաղթահարման ուժային մեթոդների և միջոցների կիրառումը: ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում:

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- Չ. Բեեզինսկու և Հ. Քիսինջերի աշխատություններում ԱՄՆ-ի գլոբալ լիդերության խնդիրը
- ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հեռանկարները 21-րդ դարում
- ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գաղափարական հիմքերը
- ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում:

### **Գրականություն**

1. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
2. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
3. **Бжезинский З.**, Стратегический взгляд: Америка и глобальный кризис, М., Астрель, 2012.
4. **Збигниев Бжезинский и Brent Скоукрофт**, Америка и мир, Беседы о будущем американской внешней политики М., Астр., 2012.
5. **Бжезинский З.**, Еще один шанс. Три президента и кризис американской сверхдержавы, М., Межд. отношения, 2007.
6. **Бжезинский З.**, Выбор. Глобальное господство или глобальное лидерство. М., Межд. отношения, 2004.

## **Լրացուցիչ գրականություն**

1. **Исаев Б. А.**, Геополитика.-СПб: Питер, 2006.
2. National security strategy. May 2010 / <http://www.whitehouse.gov/sites/default/files/rss.viewer/nationalsecuritystrategy.pdf>.
3. **Фарид Закария**, Постамериканский мир. М.: Изд-во „Европа” 2009, 280 с.
4. **Кубышкин А. И., Цветкова Н. А.**, Публичная дипломатия США. М.: Аспект Пресс. 2013, 271 с.
5. **Крупянко М. И., Арешидзе Л. Г.**, США и Восточная Азия. Борьба за „новый порядок”. М.: Международные отношения, 2010, 448 с.
6. **Михайлов С. А.**, США и общеевропейская политика в сфере безопасности и обороны. Рос. ин-т стратегических исследований. М., 2005, 75 с.
7. **Дж. Голдгейр, М. Макфол.** Цель и средства. Политика США в отношении России после „холодной войны”. М.: Международные отношения, 2009, 520 с.

## **Թեմա 7. Եվրամիության աշխարհաքաղաքական հեռանկարները XXI դարում**

ԵՄ միավորման քաղաքական և գաղափարական նախադրյալները: ԵՄ միավորման հիմնական փուլերը: Եվրոպական Միության արտաքին քաղաքականության ընդհանուր բնութագիրը: ԱՄՆ-ԵՄ փոխհարաբերությունների առանձնահատկությունները, հակամարտությունները անդրատլատյան համագործակցության շրջանակներում: ՌԴ-ԵՄ փոխհարաբերությունները ժամանակակից փուլում. ընթացիկ հիմնախնդիրները և համագործակցության հեռանկարները: ԵՄ քաղաքականությունը հետխորհրդային տարածքում: ԵՄ շահերը Հարավային Կովկասում և տարածաշրջանային հիմնական դերակատարների վերաբերմունքը: Հարավկովկասյան երկրների հետ ԵՄ համագործակցության ձևաչափերը (Եվրոպական հարևանության քաղաքականություն, Արևելյան գործընկերություն):

ԵՄ փոխհարաբերությունները Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի և աֆրիկյան պետությունների հետ: ԵՄ-Լատինական Ամերիկա հարաբերությունների ընդլայնումը:

### **Մեմինար պարապմունքի հարցեր**

- ԵՄ միավորման քաղաքական և գաղափարական նախադրյալները
- ԵՄ արտաքին քաղաքականության ընդհանուր բնութագիրը
- ԵՄ շահերը Հարավային Կովկասում:

### **Գրականություն**

1. **Исаев Б. А.**, Геополитика.-СПб:Питер, 2006.
2. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
3. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
4. Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում: Միջմասնագ. հետազոտ., Եր.: Տիգրան Մեծ, 2009:

5. **Михаель Бри**, Вклад ЕС в создании многополярного мира // Европейские страны СНГ: место в „Большой Европе”. М.: Международные отношения, 2005.
6. **Юрген Вагнер**, Партнеры или противники? Милитаризация ЕС и ее воздействие на трансатлантические отношения, там же, с. 67-107.
7. **Михаил Троицкий**, Европейский Союз в мировой политике – [www.intertrends.ru/five/004.htm](http://www.intertrends.ru/five/004.htm).
8. **Б. Росамон**, Как понимать роль ЕС в мировой политике – [dialogs.org.ua/ru/cross/page20715.html](http://dialogs.org.ua/ru/cross/page20715.html).
9. Европейский Союз как игрок на международной арене – [russiancouncil.ru/inner/?id\\_4=948#top](http://russiancouncil.ru/inner/?id_4=948#top).

#### **Гриффин и др.**

1. Россия и Европейский Союз в мировой политике. Материалы международных конференций/Под ред. М. Л. Энтима. М.: Гриф и К. 2011, 316 с.
2. Зона свободной торговли ЕС-США: союз против Китая. [www.versii.com/news/281436](http://www.versii.com/news/281436).
3. Евросоюз и США: сотрудничество и противоречия – [www.econgreat.ru/econs\\_167\\_1.html](http://www.econgreat.ru/econs_167_1.html).
4. ЕС-Китай: незрелое стратегическое партнерство – [www.alleurope.ru/es-kitay-nezreloe-strategicheskoe-partnerstvo](http://www.alleurope.ru/es-kitay-nezreloe-strategicheskoe-partnerstvo).
5. Европейский Союз и „Группа восьми”: совместная ответственность за глобальное общественное благо / О. Н. Барабанов, В. Н. Зуев, В. А. Картамышев и др.: отв. ред М. В. Ларионова. Гос. унт. Высшая школа экономики, 2011, 416 с.
6. **Karen Elizabeth Smith**, European Union Foreign Policy in a Changing World. Polity, 2003.
7. Расширение Европейского Союза и Россия (ред. Ольга Буторина, Юрий Борко), изд-во Деловая литература, 2006, 568 с.
8. The European Union: Economics and Politisies. Cambridge Universuty Press, 2007, 632 s.

9. **Калининенко П. А.**, Европейский Союз: право и отношения с Россией. М: Норма, 2012, 272 с.
10. Европейский Союз и региональные конфликты / Отв. ред – Н. К. Арбатова, А. М. Кокеев. М.: ИМЭМО РАН, 2011, 143 с.
11. **Марк Энтин**, В поисках партнерских отношений. Россия и Европейский Союз в 2008-2009 годах. М., изд-во Зебра Е, 2010, 736 с.
12. Россия и Европа. Противостояние или союз? / Под ред. С. А. Караганова, И. Ю. Юргенса. М.: Астрель: Русь-Олимп, 2010.

## **Թեմա 8. Արևելյան և Հարավային Ասիայի երկրների աշխարհաքաղաքական առաջնահերթությունները**

Արևելյան Ասիայի զարգացման հիմնական վեկտորները: Տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրները: Ճապոնիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունը: Ճապոնիա-ԱՄՆ-ՌԳ-Չինաստան փոխհարաբերությունները:

Ժամանակակից Չինաստանի աշխարհաքաղաքականությունը: Չին-ամերիկյան և չին-հնդկական հարաբերությունների բնույթը: Չինաստանի գեոտնտեսական ռազմավարությունը: Չինաստանի աշխարհաքաղաքական հեռանկարները: Ճգնաժամը Կորեական թերակղզում:

Հնդկաստանի աշխարհաքաղաքական կողը: Հնդկական աշխարհաքաղաքականության քաղաքակրթական հիմքերը: Ժամանակակից Հնդկաստանի հիմնական մարտահրավերները և աշխարհաքաղաքական հեռանկարները:

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- Չինաստանի արդի ժամանակաշրջանի աշխարհաքաղաքականությունը
- Ճապոնիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունը և հեռանկարները
- Ասիական խաղաղօվկիանոսյան շրջանը որպես ուժային բևեռների հետաքրքրությունների թատերաբեմ:

### **Գրականություն**

1. Станет ли XXI век веком Китая: Манковские дискуссии о роли Китая: Генри Киссинджер и Фарид Закария против Найла Фергюсона и Девида Даокуя Пи. Москва: АСТ, 2013.
2. Современный Китай в системе международных отношений/ Отв. ред. Д. В. Буялков. Издат-во, М.: Либроком, 2013.
3. Китай в мировой политике М., РОССПЕН, 2001.
4. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.



## Լրացուցիչ գրականություն

1. **Аарон Фригберг**, Несговорчивый Пекин (Китай-США-АТР). Россия в глобальной политике, N 5, 2012.
2. **Павел Сипин**, Три Пути России в Азии (Китай-Россия-АТР) - Россия в глобальной политике, N 5, 2012.
3. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
4. **Виталий Воробьев**, Сумма сходящихся интересов (ШОС, Китай, Центральная Азия). Россия в глобальной политике, N 6, 2012.
5. **Кирилл Черевко**, Россия на рубежах Японии, Китая и США (2-я половина XVII - начало XXI века). М., изд-во Института русской цивилизации, 2010, 688 с.
6. **Юрлов Феликс**, Индия на пути к глобальной державе – [www.perspectivy.inbo/оукитена/azia/indija\\_na\\_puti\\_k\\_globalnoj\\_derzhave\\_2011\\_10\\_28.htm](http://www.perspectivy.inbo/оукитена/azia/indija_na_puti_k_globalnoj_derzhave_2011_10_28.htm).
7. **Володин А. Г.**, Внешнеполитическая стратегия Индии: преемственность и изменения, Азия и Африка в современной политике. Сборник статей / отв. ред. д.п.н. Малышева, и.э.н., М. Рогожин: ИМЭМО РАН, 2012, с. 150-163  
[www.imemo.ru/rupubl/2012/12025.pdf](http://www.imemo.ru/rupubl/2012/12025.pdf).
8. **М. А. Поталов, А. И. Сапицкий, А. В. Шахматов**, Экономика современной Азии. М., Международные отношения, 2011, 280 с.
9. Восточная Азия между регионализмом и глобализмом. М., 2001
10. **Бунин В.**, Японо-американский союз безопасности. История и современность. М., 2000.
11. **Гребенщиков Э.**, Тихоокеанская Россия и Япония: регионализация отношений. Мировая экономика и международные отношения. N1, 2004.
12. **А. В. Семин**, Треугольник США-Китай-Япония и АТР, Азия и Африка сегодня. N 9, 2012, с. 2-8.
13. **Крупянко М. И., Арешидзе Л. Г.**, США и Восточная Азия. Борьба за „новый порядок”. М., Международные отношения. 2010, 448 с.
14. **М. Крупянко, Л. Арешидзе**, Японский национализм. Идеология и политика. М.: Международные отношения, 2012, 416 с.

## **Թեմա 9. Լատինական Ամերիկան և Աֆրիկան XXI դարի աշխարհաքաղաքական համակարգում**

Լատինամերիկյան երկրների աշխարհաքաղաքական ռազմավարությունը: Ինտեգրման գործընթացները Լատինական Ամերիկայում: Լատինական Ամերիկան ԱՄՆ-ԵՄ-Չինաստան- ՌԴ շահերի ոլորտում: Լատինական Ամերիկան աշխարհաքաղաքական նույնականացման գործընթացներում:

Աֆրիկայի աշխարհաքաղաքական զարգացման ժամանակակից փուլը: Քաղաքակրթական և կրոնական հակասությունները: Էթնիկ և դասակարգային հակամարտությունները: Աֆրիկան ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի և ՌԴ-ի անվտանգության համակարգերում:

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- Լատինական Ամերիկայի առանցքային երկրների աշխարհաքաղաքական կարգավիճակը
- Տարածաշրջանային ինտեգրացիան
- Լատինական Ամերիկայի երկրների փոխհարաբերությունները ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՌԴ-ի հետ
- Աֆրիկայի աշխարհաքաղաքական զարգացման ժամանակակից փուլը
- Աֆրիկայի երկրների ժամանակակից սպառնալիքները և քաղաքակրթական տարանջատումը:

### **Գրականություն**

1. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
2. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
3. **Тузигов А. Р.**, Основы геополитики: Учебное пособие. М., 2004.
4. **Василенко И. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2003.
5. **Сирота Н. М.**, Основы геополитики: Учебное пособие. СПб., 2001.
6. **Дугин А.**, Основы геополитики., М., 2000.

## **Լրացուցիչ գրականություն**

1. **Ханна П.**, Второй мир, М., Европа, 2010.
2. Мир после кризиса. Глобальные тенденции-2025: меняющийся мир. Доклад Национального разведывательного совета США, М., Изд-во “Европа”, 2011.
3. **Гаджиев К. С.**, Геополитические горизонты России (контуры нового миропорядка) М., Изд-во, “Экономика”, 2007.

## **Թեմա 10. Հայաստանի Հանրապետության հարակից շրջանների աշխարհաքաղաքական հիմնահարցերը**

Հարավային Կովկասը ժամանակակից աշխարհի համակարգում: Հարավային Կովկասը և տարածաշրջանային կազմակերպությունները: Անդրկովկասի մուտքը համաշխարհային համագործակցության շրջանակներ և այդ ուղղությամբ առկա դժվարությունների հաղթահարումը:

Նոր «Մեծ խաղ» Անդրկովկասում: Աշխարհի առաջատար երկրների գեոտնտեսական և քաղաքական շահերը:

ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՌԴ-ի, Թուրքիայի, ԻԻՀ-ի աշխարհաքաղաքականությունը տարածաշրջանում:

Նավթային գործոնը, կոմունիկացիոն ծրագրերը, տրանսպորտային քաղաքականությունը և տարածաշրջանային տերությունների շահերը:

### **Սեմինար պարապմունքի հարցեր**

- ԱՄՆ-ի քաղաքականությունը տարածաշրջանում, նրա նպատակներն ու խնդիրները
- Ռուսաստան և Անդրկովկաս հարաբերությունների զարգացման հեռանկարները
- Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը տարածաշրջանում
- Իրանի Իսլամական Հանրապետությունը և Հարավային Կովկասը
- ԵՄ-Անդրկովկաս հարաբերությունների արդի վիճակը և հեռանկարները:

### **Գրականություն**

1. **Гаджиев К. С.**, Геополитика Кавказа. М., 2001.
2. Армения: проблемы независимого развития. М., 1998.
3. Грузия: проблемы перспективы развития: В 2-х т., М., 2001.
4. Независимый Азербайджан: новые ориентиры: В 2-х т., М., 2000.
5. **Ломагин Н.**, Новые независимые государства как сфера интересов России и США. Pro et Contra, т.5, N2, с. 65-85.

6. Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство. М., 2000.
7. **Макаренко В. В.**, Кто союзники России? Ментальность и геополитика: парадоксы политики безопасности России. М., 2000
8. Турция между Европой и Азией. М., 2001.
9. **Коджаман Омер**, Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период. М., 2004.

### **Լրացուցիչ գրականություն**

1. **Алиев Ц. М.**, История Ирана, XX век, М., 2004.
2. **Мухаев Р. Т.**, Геополитика, М., ЮНИТИ-ДАНА, 2010.
3. **Нартов Н. А.**, Геополитика: Учебник для вузов. М., 2004.
4. **Քարաբաղյան Վ. Ա.**, Իրանի պատմություն, Եր., 2005.
5. **Չարրյան Հ.**, Հայ-թուրքական հարաբերությունները Սերձավոր և Միջին Արևելքի քաղաքական զարգացումների ենթատեքստում, «21-րդ դար», 2003, N 1, էջ 101-114.
6. **Сваранц А.**, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе. М., 2002.
7. **Сажин В.**, К вопросу об ирано-азербайджанских отношениях. Центральная Азия и Кавказ, N 4 (34), 2004, с. 97-104.
8. **Тер-Оганов Н.**, Грузино-Иранские отношения в постсоветский период, Центральная Азия и Кавказ, N 4 (34), 2004, с. 105-110.
9. Перспективы федерализма и регионализма на Южном Кавказе. Тбилиси, 2003.
10. Армения, Европа, Азия: коридоры и перекрестки. Ер., 2001.
11. **Комиссина И.**, Перспективы интеграции республик Закавказья в Европейский Союз. Центральная Азия и Кавказ, N 1 (34), 2001, с. 105-113.
12. **Крылов А.**, Армения: некоторые особенности современной политики. Центральная Азия и Кавказ, N 4 (34), 2004, с. 166-175.
13. **Гусейнов В. А.**, Каспийская нефть. Экономика и геополитика. М., 2002.
14. **Жильцов С. С., Зонн И. С., Ушков А. М.**, Геополитика Каспийского региона. М., 2003.

15. **Мишель Коллон**, Нефть, PR, война, М., 2002.
16. **Гаджиев К. С.**, Кавказский узел в геополитических приоритетах России. М., Логос, 2010.
17. “Большая игра” на Кавказе. Вчера, сегодня, завтра. М.: Международные отношения, 2010.
18. Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում: Մասնագիտ. հետազ., Եր.: Տիգրան Մեծ, 2009:
19. **Захаров В. А., Арешев А. Г.**, Расширение НАТО в государства Закавказья: этапы, намерения, результаты. М.: МГИМО-Университет, 2008.
20. **Քաղաքացիական Հ.**, Հայաստանը դարերի սահմանագծին, Եր.: Նաիրի, 2003:
21. **Геворкян Н.**, Армяно-американские взаимоотношения в контексте внешнеполитических приоритетов США на Южном Кавказе (1991-2001), Ер.: Лимуш, 2012 .
22. **Александров М. В.**, Битва за Кавказ: 2004-2008, Институт стран СНГ в борьбе за национальные интересы на Южном Кавказе.-М., «Институт стран СНГ», 2010.
23. **Рональд Д. Асмус**, Маленькая война, которая потрясла мир. Грузия, Россия и будущее Запада. Тбилиси, Парнас, 2010.
24. Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը /գիտ. խմբ. Վ. Հարությունյան, թեմ. դեկ. և մասն. խմբ. Թ. Թորոսյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010:
25. **Томас де Ваал**, Черный сад, Армения и Азербайджан между миром и войной. М.: Политическая энциклопедия, 2014.
26. **Վ. Օսկանյան**, Անկախության ճանապարհով. Փոքր երկրի մեծ մարտահրավերները: Նախարարի օրագրից, Եր., Սիվիլիթաս հիմնադրամ, 2013:
27. Հայաստան 1998-2007, խմբագիր՝ Ա. Վարդանյան.- Եր., Տիգրան Մեծ, 2008:

28. **Блищенко В. И., Солнцева М. М.**, Кризисы и конфликты на постсоветском пространстве: М., «Аспект Пресс», 2014.
29. **Европезация и разрешение конфликтов: конкретные исследования европейской периферии.**/ Бруно Коллитерс, Майкл Эмерсон, Мишель Хейссен и др. М.: Изд-во «Весь Мир», 2005.
30. **Деметрадзе М. Р.**, От «Кавказских Балкан» к «Кавказскому дому», М., Российский институт культурологии, 2001.

## **Բովանդակություն**

Ծանոթագրություն .....	3
-----------------------	---

### **Բաժին 1.**

#### **Կազմակերպական-մեթոդական խնդիրներ**

1.1. Դասընթացի նպատակը .....	5
1.2. Դասընթացի խնդիրները.....	6
1.3. Դասընթացի տեղը սոցիո-հումանիտար կրթության համակարգում.....	6
1.4. Դասընթացի կրթական արդյունքները .....	8
1.5. Կրթական մեթոդները (պարապմունքների անցկացման ձևերը) .....	8
1.6. Դասընթացի բովանդակության յուրացման խնդիրները.....	9
1.7. Գիտելիքի ստուգման ընթացիկ ձևերը.....	10

### **Բաժին 2.**

#### **Դասընթացի թեմաները և համառոտ բովանդակությունը**

2.1. Դասընթացի կազմակերպական-մեթոդական տվյալները.....	11
2.2. Դասընթացի թեմատիկ պլանը .....	11
2.3. Դասընթացի բովանդակությունը .....	13



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Աշխարհաքաղաքականություն  
ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ**

Կազմեց՝ պ. գ. թ., դոցենտ  
**Վարդագարյան Մ. Ե.**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. սրբագրումը՝ Վ. Գերձյանի

Տպագրված է «Վարդան Սկրտչյան» ԱԶ տպագրատանը:  
Երվանդ Քոչար 7-62

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 2,5:  
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն,  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ՆՐԱՏԱՐԱԿՆԻԹԵՅԻՆ  
ԵՐԵՎԱՆ 2015